ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. թիվ 285-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԱԲՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի ե) կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի № 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման թիվ 1 հավելվածի 14-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հունվարի 14-ի թիվ 23-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 8.2 կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների շտաբների պետերի հետ 2020 թվականին անցկացվող հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Լոռու մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ ծրագրով սահմանված ժամկետներում ապահովել

իրենց ծառայությունների շտաբների պետերի մասնակցությունը պարապմունքներին:

3. ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝ ապահովել սույն որոշման հավելվածով հաստատված պարապմունքների կազմակերպումն ու անցկացումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. մարտի 2-ի
թիվ 285-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների շտաբների պետերի հետ 2020 թվականին անցկացվող հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման

Հ/Հ	Թեման	Անցկացնող	Անցկացման օրը և ժամը	Անցկացման վայրը
1	Մարզի ՔՊ համակարգը (կառուցվածքը, խնդիրները, ուժերը)	ՄՓՎ պետի տեղակալ	20.03 ժամը 11:00	Լոռու մարզային փրկարարա-կան վարչության դահլիճ
2	ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին»			
3	Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը			
4	Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը:	ՄՓՎ ԲՊԲ պետ	**19.06** ժամը 11:00	
5	Քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի կառուցվածքն ու բովանդակությունը:			
6	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը:			
7	Քաղաքացիական պաշտպանության պլանների լրամշակման կարգը:	ՄՓՎ ՃԿԿ պետ	18.09 ժամը 11:00	
8	Քաղաքացիական պաշտպանության ազդանշանները և գործելու կարգը:			
9	Քաղաքացիական պաշտպանության կառույցների տեսակները, դերը և նշանակությունը:			

10	Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպու-թյունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը:	ՄՓՎ ԲՊԲ ավագ հրահանգիչ	18.12 ժամը 11:00	
11	Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կազմակերպումն ու իրականացումը:			
12	ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»:			

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

03/02/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ